ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հոկտեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

139
(2619)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 104

«Դուք պիտի գիտակցեք, որ գերիների հարցն այսօր ուզում են մեր պետության ու ժողովրդի դեմ օգտագործել անհամաչափ զիջումներ պարտադրելու համար: Այո, այդ տղաները Բաքվի բանտերում պայքարում են Հայաստանի անկախության համար, Հայաստանի ինքնիշխանության համար: Եվ, այո, նրանք մեզ կներեն՝ մի ամիս, երկու ամիս ավելի գերության մեջ մնալու համար, բայց նրանք չեն ների մեզ, եթե մենք հանուն իրենց ազատության զիջենք մեր երկրի անկախությունը եւ ինքնիշխանությունը»,- այս մասին դեռեւս 2021-ի խորհրդարանական արտահերթ ընտրությունների քարոզարշավի ժամանակ՝ հունիսի 7-ին, Արմավիրի մարզում հայտարարում էր այն ժամանակ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը: Ըստ երկրի առաջնորդի՝ սարսափելի բան չկա, որ գերիները մեկ, երկու ամիս ավելի կարող են անցկացնել հակառակորդի բանտերում ու կտտանքների ենթարկվել նրանց կողմից: Այսօր, սակայն, երբ հասարակությունը պարզապես ցնցված է՝ ինչպես են ադրբեջանցիները վարվում հայ գերիների հետ՝ գնդակահարելով նրանց, Փաշինյանի՝ վերոնշյալ խոսքերն էլ ավելի ցավեցնող են դառնում: Նիկոլ Փաշինյանը, սակայն, պարզվում է, այժմ փոխել է դիրքորոշումը կամ հասկացել է, որ զգայուն այդ թեմայից հնարավորիս քիչ պետք է խոսի: Օրերս՝ սեպտեմբերի 30-ին ունեցած հարցազրույցի ժամանակ արդեն Փաշինյանը հայտարարում էր. «Դա այն հարցերից է, որ մեր ամենօրյա աշխատանքի թեմաներից է: Ես նաեւ նախկին փորձից գիտեմ. օրինակ՝ երբ ես Վլադիվոստոկում էի, գերիներից հարց տվեցին, ասացի՝ թույլ տվեք՝ ոչինչ չասեմ: Հաջորդ օրը հինգ գերի վերադարձավ, ես գիտեի, բայց եթե հայտարարեի, գուցե բարդություն առաջանար: Ես ոչ թե բան չունեմ ասելու այս թեմայով, ասված ցանկացած բան շատ տեղեկատվություն կտա հանրությանը, բայց ոչ մի օգուտ չի տա մեր գործին, մեծ հավանականությամբ, վնաս կտա»: Նա, փաստորեն, գերիների մասին հակասական հայտարարություններ է արել. մեկ ասում է՝նրանք մեր անկախության համար են պայքարում, հետո գերադասում է լռել, որ չվնասի: Սա նշանակում է, որ Փաշինյանը հերթական անգամ ստել է:

Արդեն երկու օր է՝ հայ հասարակությունը ցնցված է Ադրբեջանի կողմից հրապարակված տեսանյութից, թե ինչպես են գնդակահարում հայ ռազմագերիներին: «Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ կրկին հիշեց Ջերմուկ ներթափանցած այն խմբի մասին, որի վերաբերյալ հայտարարություններ էին արել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանն ու ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը: ԳՇ պետը դիվանագիտական ներկայացուցիչների հետ Ջերմուկ կատարած այցի ժամանակ՝ սեպտեմբերի 16-ին, նշել էր. «Այդ մխրճումները Ադրբեջանի ՋՈՒ կողմից իրականացվել են խմբերով, ջոկատներով, դրանց որոշակի խմբեր, ջոկատներ նաեւ գտնվում են մեր ստորաբաժանումների անմիջական հսկողության տակ, նաեւ շրջափակումների մեջ: Սպասում ենք՝ պաշարները վերջանան, եւ ինքնուրույն հետ գնան»: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պարզելու համար՝ այդ խումբը գնաց, թե ոչ, սակայն մեզ պատասխան այդպես էլ չտվեցին: Փորձեցինք անգամ ԳՇ պետ Էդվարդ Ասրյանից պատասխան ստանալ, սակայն դա էլ չհաջողվեց: «Ժողովուրդ» օրաթերթի՝ ՀՀ ՊՆ-ին մոտ կանգնած խիստ հավաստի աղբյուրները փոխանցում են, որ Հայաստան ներթափանցած ադրբեջանական զինված խումբն այս օրերին անփորձանք հետ է գնացել Ադրբեջան: Ստացվում է՝ մեր զինվորներին Ադրբեջանը շարունակում է գերեվարել, գնդակահարել հենց մեր սուվերեն տարածքում, սակայն հայկական կողմը թողնում է, որ մեզ մոտ շրջափակման մեջ գտնվող ադրբեջանցի զինծառայողներն անարգել վերադառնան Ադրբեջան: Ի վերջո, կարող էինք նրանց եւս գերեվարել Ջերմուկի մատույցներում, փոխանակել մեր գերիների հետ, սակայն ՀՀ զինված ուժերը ոչ միայն չի ոչնչացրել մեր տարածք ներթափանցած հակառակորդին, ինչպես պահանջում է ՀՀ զինվորական կանոնադրությունը, այլ թողել է՝ անարգել հետ վերադառնան իրենց երկիր: Ի՞նչ է սա, եթե ոչ պետական հանցագործություն:

ՀՀ նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի մտերիմ, Ռոբերտ Քոչարյանի քրեական գործով մեղադրող դատախազ Գեւորգ Բաղդասարյանի գլխին սեւ ամպեր են կուտակվում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝նա առաջիկայում ազատման դիմում կգրի: Բանն այն է, որ նա գլխավոր դատախազությունում տեւական ժամանակ տպավորություն է ստեղծել, թե բարձրակարգ դատախազ է, եւ քանի որ ստանձնել է Ռոբերտ Քոչարյանի գործով մեղադրող դատախազի պարտականությունները, ուստի անձեռնմխելի է: Ավելին՝ դատախազության մեր աղբյուրների փոխանցմամբ՝ համակարգում պատկեր է ստեղծել, թե քաղաքական իշխանություններն իր թիկունքում են, սակայն Աննա Վարդապետյանի նշանակումով իրավիճակը փոխվել է: Գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Բաղդասարյանին հասկացրել են, որ նա, լինելով «բարձրակարգ իրավաբան», ձախողեց Ռոբերտ Քոչարյանի դեմ հարուցված «Մարտի 1»-ի գործով մեղադրանքը, քանի որ ՍԴ-Ն այն հակասահմանադրական ճանաչեց: Գեւորգ Բաղդասարյանի եւ Աննա Վարդապետյանի ներքին հակադրությունները սկսվել են սեպտեմբերի 2-ից հետո: Աննա Վարդապետյանը ցանկացել է իր տեղակալ բերել եւ նշանակել ՀՀ քննչական կոմիտեի Երեւանի Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժնի նախկին պետ Հակոբ Գեւորգյանին: Գեւորգյանը դիմում է ներկայացրել որակավորման հանձնաժողով եւ քննություն հանձնել, սակայն քննությունը ընթացել է լարված մթնոլորտում, եւ Հակոբյանին սեպտեմբերի 29-ին քննությունից կտրել են: Պարզվում է՝ հանձնաժողովի նախագահը եղել է նախկին դատախազ Արթուր Դավթյանի հետ քավորսանիկական կապեր ունեցող Գեւորգ Բաղդասարյանը, որին չի ներվի հանդգնությունը: Հավելենք, որ Գեւորգ Բաղդասարյանի պաշտոնազրկման գործընթացի ծիլերը արդեն դատախազությունում նկատելի են, նրա ամենամտերիմներից մեկին Երեւան քաղաքի դատախազությունից տեղափոխել են մարզ՝ հասկացնելով, որ նախկին բարքերը ավարտվել են:

Երեկ ԱԺ խորհուրդը նիստ էր գումարել եւ հաստատել այսօր մեկնարկելիք նիստերի օրակարգը: Արդեն դրանից հետո «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներն էին հավաքվել՝ քննարկելու այսօր կայանալիք նիստերի օրակարգը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ դռնփակ նիստի ժամանակ առանձնահատուկ որեւէ բան չի քննարկվել, խոսել են օրակարգի մասին եւ հեռացել: Հետաքրքիր է, որ սովորաբար նրանց այս նիստերին մասնակցում էր անգամ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, սակայն այս անգամ նա բացակա էր: Ավելին՝ ՔՊ-ականները զարմացած էին Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցում եղած հրապարակումից, որի մեջ նշվել են Ադրբեջանի հինգ պահանջները: Այս թեման երեկ նրանք արծարծել են միմյանց հետ խոսելիս՝ հասկանալով, որ իրավիճակը իսկապես լուրջ է, սակայն ՔՊ նիստի ժամանակ այլ հարցերի անդրադարձ չի եղել, բացի օրակարգի մի քանի թեմաներից:

ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶԵՆՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

«1991 թվականից ի վեր առաջին անգամ ԱՄՆ-ի խաղաթղթերը մշակողները Կոնգրեսում երկկուսակցական կայուն ճնշման ներքո ենթարկում են Հայաստանին ամերիկյան զենք վաճառելու հարցը՝ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի ագրեսիայից եւ էթնիկ զտումներից պաշտպանվելու համար»: Ադրբեջանական վերջին հարձակման օրերին Փաշինյանն էր խոսել պաշտպանական զենք ձեռք բերելու դժվարությունների մասին, թե փողը կա, բայց ոչ բոլոր երկրներն են պատրաստ սպառազինություն վաճառել Հայաստանին:

Այս եւ այլ հարցերի շուրջ Armlur.am-ի զրուցակիցն է Հարավային Կովկասի հարցերով վերլուծաբան, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Նեյլ Մակֆարլեյնը:

-Պարոն Մակֆարլեյն, 1991 թվականի՝ Հայաստանի անկախությունից ի վեր առաջին անգամ ԱՄՆ քաղաքական գործիչները դիտարկում են սպառազինության վաճառքը Հայաստանին, որպեսզի օգնեն պաշտպանվել Ադրբեջանի ագրեսիայից: Ի՞նչ եք կարծում, այս նախաձեռնությունը կյանքի կկոչվի՞:

-Չի բացառվում, որ ԱՄՆ-ն ի վերջո զենք վաճառի Հայաստանին, սակայն երաշխավորված չէ: Իհարկե, ԱՄՆ-ն ունի զգալի հետաքրքրություններ Հայաստանի հետ հարաբերությունների հարցում, սակայն դրանք կան նաեւ Ադրբեջանի հետ հարաբերություններում: Եվ սա հատկապես հիմա՝ հաշվի առնելով Եվրոպայում գազի դեֆիցիտը: Եթե անգամ նրանք նախկինում զենք են վաճառել, չեմ կարծում, թե դա եղել է այն մակարդակի վրա, որ ազդել է կոնֆլիկտի վրա:

-Ըստ Ձեզ՝ հայ-ամերիկյան հարաբերությունների վրա ի՞նչ ազդեցություն է ունեցել կամ կարող է ունենալ ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի այցը Հայաստան:

-Խոսնակ Փելոսին կոնգրեսական է Կալիֆորնիայից: Գաղտնիք չէ, որ Կալիֆորնիան ունի հայկական մեծ համայնք: Նա արեց այն, ինչ պետք էր ներքաղաքական պատճառներով: Չեմ կարծում, թե այն Հայաստան-ԱՄՆ հարաբերությունների վրա կարող են էական ազդեցություն ունենալ:

-Դուք հետեւո՞ւմ եք Հայաստանում տիրող իրավիճակին: Վերջին շրջանում ավելացել են հակառուսական տրամադրությունները: Այդ ամենը օբյեկտիվ համարո՞ւմ եք:

-Ես մի փոքր հետեւում եմ: Մի պատճառը կարող է լինել մեծ թվով ռուսների հաստատումը Հայաստանում: Մյուս պատճառը կարող է լինել այն հանգամանքը, որ վերջին ռազմական գործողությունների ժամանակ Ռուսաստանը լուրջ օգնություն չցուցաբերեց Հայաստանին: Ինչպես ԱՄՆ-ն, այնպես էլ Ռուսաստանն ունի իր հետաքրքրությունը եւ Ադրբեջանի, եւ Հայաստանի հետ հարաբերություններում: Նա ձգտում է պահել երկուսին եւ չնեղացնել նաեւ Թուրքիային:

-Ամեն դեպքում, Ռուսաստանն իրեն պահե՞լ է որպես ռազմավարական դաշնակից:

-Ոչ, նրանք խաղում են երկու կողմերում էլ: Ռազմավարական դաշնակիցներն իրենց այդպես չեն պահում:

-Երեկ նոր կադրեր հրապարակվեցին, որոնք կրկին անգամ ապացուցում են Ադրբեջանի կողմից կատարված պատերազմական հանցագործությունների մասին: Նախկինում եւս այլ ապացույցներ կային: Ի՞նչ պետք է անի Հայաստանն այս իրավիճակում:

-Եթե Հայաստանը կարծում է՝ գործ ունենք Ադրբեջանի կողմից կատարված ռազմական հանցագործությունների հետ, ապա կարելի է այն հասցնել Միջազգային քրեական դատարան, սակայն ո՛չ Հայաստանը, ո՛չ Ադրբեջանը չեն ստորագրել Հռոմեական համաձայնագիրը, որը ստեղծել է Միջազգային քրեական դատարանը: Եթե Հայասանը դիմի դատարան, ապա ես կարծում եմ, որ Ադրբեջանը հակընդդեմ հայց կներկայացնի արդեն Հայաստանի դեմ նույն մեղադրանքով: Ի վերջո, մասսայական տեղահանումները միջազգային իրավունքի համաձայն եւս հանցագործություն է համարվում: Ես կարծում եմ՝ Հայաստանը կարող է դիմել նաեւ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ, բայց այս դեպքում ելքն անկանխատեսելի կլինի:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Մինչ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը փորձում է հեռեւողականորեն հիմնավորել խաղաղության պայմանագրի կնքման անհրաժեշտությունը, Ադրբեջանը գործում է հերթական պատերազմական հանցագործությունները:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից հայ ռազմագերիների սպանությունները պետական մակարդակով հովանավորվող Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության հերթական դրսեւորումներն են: Պատերազմական այս հանցագործությունները ոտնահարում են բոլոր այն մեխանիզմները, միջազգային հումանիտար իրավունքի բոլոր պահանջները, որոնց ջատագովն է միջազգային հանրությունը, եւ որոնցով որ պետությունները պարտավորվել են առաջնորդվել ժամանակակից միջազգային հարաբերություններում:

Ռազմագերիների կյանքի իրավունքի ոտնահարման այս հանցագործությունները ամբողջությամբ խախտում են «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնեւի կոնվենցիայով ամրագրված արգելքները՝ ոտնձգությունը կյանքի եւ ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ, մասնավորապես՝ ամեն տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, տանջահարությունը եւ խոշտանգումները:

Գերության մեջ պահող տերությունն է պատասխանատվություն կրում ռազմագերիների հետ վարվելակերպի համար, ուստի հրատապ նամակներ եմ ուղարկում միջազգային կազմակերպություններին, մարդու իրավունքների հետ առնչվող բոլոր միջազգային գործընկերներին՝ շտապ գործարկելու բոլոր իրավաքաղաքական մեխանիզմները՝ ի պաշտպանության միջազգային հանրության «մարդասիրական մանդատի» ներքո գտնվող հայ ռազմագերիների իրավունքների:

Ադրբեջանի ռազմաքաղաքական իշխանությունների այս հանցագործությունները միջազգային դատարանի եւ հանրության կողմից պետք է անհապաղ քննության առարկա դառնան դրանց քրեաիրավական որակման առումով, եւ հանցագործները շտապ ենթարկվեն պատասխանատվության»:

ԾԱԽՍԵՐԸ՝ ՀՀ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՑ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ՝ ԱԺ պատգամավորները կմեկնեն Ռուանդա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հոկտեմբերի 9-15-ը Կիգալի՝ Ռուանդայի մայրաքաղաք կմեկնեն ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Ծովինար Վարդանյանը, Հերիքնազ Տիգրանյանը, Հասմիկ Հակոբյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Էլինար Վարդանյանը, ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանը, վերջինիս տեղակալ Էդուարդ Խանզրադյանն ու ԱԺ աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջազգային կազմակերպությունների բաժնի գլխավոր մասնագետ Ջաբելա Ղազարյանը:

Կարգադրության մեջ նշվում է, որ ԱԺ պատվիրակությունը Ռուանդայում մասնակցելու է Միջխորհրդարանական միության 145-րդ վեհաժողովի աշխատանքներին:

Հավելենք, որ գործուղման բոլոր ծախսերը, այդ թվում՝ ճանապարհածախսը, օրապահիկը, գիշերավարձը հոգում է ՀՀ պետբյուջեն:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԱԺ պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանը, Նարեկ Բաբայանն ու Հակոբ Ասլանյանը ներկայացրել են փոփոխություններ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում: ArmLur.am-ը նախագծից տեղեկանում է, որ սահմանվելու է այն հերթականությունը, որով տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվելու:

Ըստ այդմ, այն կունենա հետեւյալ հերթականությունը.

1. հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը՝ բացառությամբ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող հանրային հեռարձակողների,
2. հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
3. մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
4. մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
5. սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հանրային հեռարձակողները,
6. հեղինակազրկված հեռարձակողների տեսալսողական ծրագրերը:

Հիմնավորման մեջ նշվում է, թե նախաձեռնության նպատակն է սահմանել հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերի՝ եթեր հեռարձակման հերթականությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՆԱԿՆԿԱԼԻ ԵՆ ԵԿԵԼ

Երեկ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցը հրապարակել է Ադրբեջանի 5 պահանջները:

1. ԼՂ պաշտպանության բանակի լուծարում,
2. ԼՂ ճանաչում Ադրբեջանի կազմում՝ առանց որեւէ ինքնավար կարգավիճակի, այսինքն՝ 0 կարգավիճակով,
3. միջանցք՝ Հայաստանի տարածքով,
4. սահմանագծման եւ սահմանազատման գործընթաց 1919, 1920 թթ. քարտեզներով (առայժմ հայտնի չէ, թե կոնկրետ որ քարտեզների մասին է խոսքը),
5. անհետ կորած ադրբեջանցիների ճակատագրի պարզաբանում (հնարավոր է հետագայում Հայաստանին պատերազմական հանցագործությունների մեջ մեղադրելու միտումով):

ArmLur.am-ի տեղեկություններով՝ անգամ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում են անակնկալի եկել այս հոդվածից, քանի որ վարչապետ Փաշինյանը երբեք այսքան պարզ եւ դետալային չի խոսել իր թիմի հետ: Իհարկե, վերջին՝ սեպտեմբերի 28-ի երեք ժամանոց ՔՊ-ի նիստի ժամանակ Փաշինյանը ասել է, թե իրավիճակը վատ է, բայց այս հոդվածն ավելի շատ է վախեր սերմանել: ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխող ՔՊ-ն որոշել է համագումար իրականացնել մինչեւ այս ամսվա վերջ, սակայն դեռ վերջնական որոշում չեն կայացրել իրավիճակի անկայուն եւ ոչ պարզ լինելու պատճառով:

ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ Է ԴՆՈՒՄ

ՔՊ խմբակցության պատգամավոր Վահագն Հովակիմյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջադրել է իմ թեկնածությունը: ՀՀ Սահմանադրության 195-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ ԿԸՀ անդամներն իրենց լիազորություններն իրականացնելիս չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ որեւէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Ըստ այդմ, տեղեկացնում եմ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ ի դեմս վարչության նախագահ Սուրեն Պապիկյանի, դիմում եմ ներկայացրել կուսակցության անդամակցությունս դադարեցնելու մասին: Այսպիսով, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն անդամակցությունս այլեւ դադարեցված է: Տեղեկացնեմ նաեւ, որ այսօր նաեւ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին եմ ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնից եւ պատգամավորի պաշտոնից հրաժարականիս դիմումները»: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ հուլիսի 20-ին էր գրել, որ իշխող քաղաքական ուժը՝ «Քաղաքացիական պայմանագիրը», Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնը նույնպես իրենով կանի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԿԸՀ նախագահի պաշտոնում 11 տարի պաշտոնավարող Տիգրան Մուկուչյանին փոխարինելու կգա նախկին լրագրող, այժմ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Վահագն Հովակիմյանը:

ԱՌԱՋԱԴՐՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ՝ ԿԸՀ-ՈՒՄ

ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հրապարակել է, թե ում է առաջադրում ԿԸՀ նախագահի ու ԿԸՀ անդամների պաշտոններում:

Այսպես, ԿԸՀ նախագահի պաշտոնում քաղաքական իշխանությունն առաջադրել է Վահագն Հովակիմյանի թեկնածությունը: Նա ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր է, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը:

ԿԸՀ անդամների պաշտոնում ՔՊ-ն առաջադրել է Նունե Հովհաննիսյանի, Ժիրայր Կարապետյանի, Արուսյակ Տերչանյանի, Արմեն Սմբատյանի, Աննա Գրիգորյանի եւ Սիլվա Մարկոսյանի թեկնածությունները:

Նունե Հովհաննիսյանը ԿԸՀ-ում աշխատելու երկարամյա փորձ ունի, համակարգում 2006-ից է: 2014-ից առ այսօր երկու անգամ ԿԸՀ անդամ է ընտրվել:

Արմեն Սմբատյանը համակարգում 2007-ից է: Սկզբնապես թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ է եղել, ապա Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով (2011-ին) նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ընտրվել հանձնաժողովի քարտուղար: Սմբատյանն առ այսօր ԿՀՔ քարտուղարն է:

ԿԸՀ-ի հնաբանկներից է նաեւ Սիլվա Մարկոսյանը: 2007- 2011-ը եղել է ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ: 2011-ին ու 2016-ին սկզբում՝ նախագահի հրամանագրով, ապա ԱԺ-ի որոշմամբ ընտրվել ԿԸՀ անդամ:

Արուսյակ Տերչանյանը, Աննա Գրիգորյանն ու Ժիրայր Կարապետյանը ԿԸՀ-ի հետ մինչեւ այս պահն առնչություն անուղղակի կերպով են ունեցել: ArmLur.am-ի տեղեկացմամբ՝ Տերչանյանն ու Կարապետյանը համագործակցել են ԿԸՀ-ի հետ, դասընթացներ են անցկացրել, դասախոսություններ կարդացել: Այդ մասին Արուսյակ Տերչանյանի Facebook-ի անձնական էջում հրապարակված լուսանկարներն էլ են վկայում: Նշենք, որ Տերչանյանը IFES Armenia ընկերությունում է այժմ աշխատում, նախկինում եւս մշտական տարբեր կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ է համագործակցել:

Մեր տեղեկություններով՝ Ժիրայր Կարապետյանը մասնագիտությամբ իրավաբան է, այժմ Ճանապարհային ոստիկանությունում է աշխատում:

Աննա Գրիգորյանը, որն այժմ ՊԵԿ-ում է աշխատում, մոտ մեկ տարի առաջ ԱԺ-ում էր. աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի տեղակալն էր:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՍՊԱՆԱՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Իսպանիայում ՀՀ դեսպանությունը ներկայացրել է Իսպանիայի Կոնգրեսի պատգամավոր Անտոն Գոմես-Ռեհինոյի գրառումը՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից հայ ռազմագերիների սպանության վերաբերյալ:

«Հայ ռազմագերիներին գնդակահարող ադրբեջանցի զինվորների վայրենի պատկերներն անընդունելի են:

Կրկնակի անհանդուրժելի է այլասերված կերպով օգտվել այն քաղաքական դիրքից, որը ձեզ ընձեռում է ձեր գազը (համաշխարհային սովի ժամանակ)՝ ներխուժումներ կատարելու եւ մարդու իրավունքները ոտնահարելու համար»,- գրել է պատգամավորը:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԿՐԿԻՆ ԽԱԲԵՑ

Ադրբեջանը խոստացել էր մինչեւ սեպտեմբերի 30-ը 17 հայ գերիների ազատ արձակել, սակայն չի կատարել իր ստանձնած պարտավորությունը: Այս մասին հայտարարել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Սեպտեմբերի 27-ին ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի նախաձեռնությամբ Սպիտակ տանը տեղի ունեցած իմ եւ Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւի հանդիպման ժամանակ եռակողմ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ մինչեւ սեպտեմբերի 30-ը Ադրբեջանն ազատ է արձակելու սեպտեմբերին գերեվարված 17 հայ ռազմագերիներին:

Արձանագրենք, որ հերթական անգամ Ադրբեջանը չի կատարել իր ստանձնած պարտավորությունը»,-սոցցանցի իր էջում գրել է ՀՀ ԱԽ քարտուղարը:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԱԶԱՏՎԵԼ Է

Արթուր Ասոյանն ազատվել է տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պաշտոնից. որոշումը ստորագրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունների կատարումը կվերապահվի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արմեն Դանիելյանին:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը շաբաթներ առաջ էր գրել, որ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը ազատման դիմում է գրել: Տեղեկությունը անձամբ մեզ հետ զրույցում հաստատեց նա՝ նշելով, որ կա նման բան: Մեր այն հարցին՝ ինչն է պատճառը, հայտնեց, որ պաշտոնից հեռանալը այլ աշխատանքի անցնելու հետ է կապված:

ԿՄԵԿՆԻ ՄՈՍԿՎԱ

ՀՀ Ազգային Ժողովի նախագայ Ալեն Սիմոնյանն օրերս Մոսկվա կմեկնի: Հրավիրողը Ռուսաստանի Պետական Դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինն է:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ նախագահի այցը տեղի կունենա հոկտեմբերի 9-12-ը:

Տեղեկացանք նաեւ, որ, ըստ երեւույթին, ԱԺ նախագահ Սիմոնյանի հետ Մոսկվա կմեկնեն ԱԺ հայ-ռուսական բարեկամական խմբի անդամները:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

ԻՆՉՆԻՑ ՎԱԽԵՆՈՒՄ, ՋԵՆՔՈՎ Է ԳԱԼԻՍ

Սեպտեմբերի 23-ին Երեւանի ավագանու նիստում ուշագրավ բացահայտումներ տեղի ունեցան: Մասնավորապես, այդ օրը պարզ դարձավ, որ Երեւանի ավագանու ՔՊ խմբակցության անդամ Արման Անտոնյանը նույն ավագանու «Լույս» խմբակցության անդամներ Անի Խաչատրյանի եւ Թեհմինա Վարդանյանի դեմ բողոք է ներկայացրել, ոչ ավել, ոչ պակաս, իր դեմ մահափորձ կազմակերպելու համար:

ArmLur.am-ի հետ զրույցում Անի Խաչատրյանը նկատում է՝ նման հայտարարությունների պատճառը պարզապես ավագանու նախավերջին նիստն է եղել, որտեղ ընդամենը վիճաբանություն է եղել իր եւ Արման Անտոնյանի միջեւ: «Նա գնացել եւ ասել է, թե ինչ-որ կապ ունենք այդ դեպքերի հետ: Գնացինք Քննչական կոմիտե, մի քանի ժամ մնացինք եւ վերադարձանք Երեւան: Էլի եմ ասում՝ նիստի ժամանակ տեղի ունեցած վիճաբանությունը կապ չունի ոչ մի բանի հետ: Տվյալ անձնավորության մասով սպասելի էր, եւ ես չզարմացա: Գրեթե ամեն նիստին մի քանի անգամ են նման վիճաբանություններ լինում: Եվ մեր հնչեցրած արտահայտությունները եւս աղերս չունեն իրականության հետ: Նույնիսկ այդ գործում կան արդեն մարդիկ, որոնք որոնման տակ են, եւ գրեթե հայտնի են մարդիկ», - ընդգծեց նա:

Իսկ ի՞նչ պատմության մասին է խոսքը. 2021 թվականի օգոստոսի 1-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, անհայտ անձինք մահակներով եւ դանակներով ներխուժել էին Արման Անտոնյանի տուն: Նրան դաժան ծեծի էին ենթարկել եւ դանակի 11 հարված հասցրել: Հանցագործները փախչելիս հարվածներ էին հասցրել նաեւ Անտոնյանի 87-ամյա հորը: Եվ, փաստորեն, նա տվել է նաեւ ավագանու անդամների անունները:

Խաչատրյանը նաեւ իրավապահ մարմիններին, քաղաքապետարանի անվտանգության ուշադրությունը հրավիրել էր, հորդորել դիտել Երեւանի ավագանու սեպտեմբերի 13-ի նիստի տեսագրությունը, քանի որ հստակ երեւում է՝ ավագանու նույն անդամը գալիս է նիստերին զենքով: «Ես բարձրաձայնեցի, որ կարծես թե զենք էր, վստահ չասեմ, տպավորությունն էր այդպիսին, սակայն դա պետական պահպանության տակ գտնվող տարածք է, եւ նա այնքան վախեցած է, որ զենքով է գալիս: Միգուցե հենց ինձնից կամ տիկին Վարդանյանից է վախենում, բայց ծիծաղելի է: Ես ասացի՝ կարող են կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները փակվել եւ պաշտպանել նման մարդկանց իրավունքները: Մենք շատ ավելի ուժեղ ենք, եւ դա փաստ է: Ես ինձ ավելի ուժեղ եմ պատկերացնում, քան նման մարդիկ», - նշում է նա:

Սակայն նրա խոսքերին արձագանք չի եղել: «Հենց ամբողջ խնդիրն այն է, որ իշխանական ավագանու անդամը, երբ անհեթեթ մեղադրանք էր հնչեցրել, մեզ հրատապ կանչեցին: Սակայն արդեն տասն օր է անցել իմ հնչեցրած խոսքերից հետո, շուտով նորից ավագանու նիստ է, եւ նորմալ չէ, որ Երեւանի գլխավոր դահլիճ գան զենքով, եթե անգամ դա օրինական է: Այստեղ ես խնդիր եմ տեսնում, եւ ոստիկանությունը որեւէ կերպ չի արձագանքում: Դա նորմալ չէ», - նշում է նա:

Անի Խաչատրյանը նշում է, որ ՔՊ ավագանու անդամ Արման Անտոնյանի հետ հարաբերությունները բավականին լարված են: «Ի դեպ, իր մահափորձի օրը ես ամենից շատ անհանգստացած անդամներից էի, շատ էի անհանգստացել: Հիմա հարաբերություններ չկան առհասարակ, եւ երբ անգամ իրար կողք ենք կանգնում, ինձ տհաճ է իր կողքին կանգնելը, եւ ես փորձում եմ հեռու կանգնել նրանից»,- եզրափակում է Անի Խաչատրյանը՝ ասելով, թե կրկին պատրաստվում է դիմել ոստիկանություն եւ հասկանալ, թե ինչ է արվել իր դիմումի մասով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՋԱՅՐԱՅՑԱԾ Է

ՑԱՆԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ԿՏՐԵԼ ԵՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի ցանկալի թեկնածուներից մեկը չի կարողացել տեղափոխվել ՀՀ գլխավոր դատախազություն եւ նշանակվել դատախազի տեղակալ:

Այս հանգամանքը խիստ զայրացրել է Աննա Վարդապետյանին, որ նրա ցանկալի թեկնածուին կտրել են քննությունից, եւ նա խիստ վրդովվել է, թե ինչպես է գլխավոր դատախազության որակավորման հանձնաժողովը իր ցանկալի թեկնածուին կտրել քննությունից: Իսկ ո՞վ է եղել Աննա Վարդապետյանի ցանկալի թեկնածուն, որին նա չի կարողացել տեղափոխել դատախազություն:

Աննա Վարդապետյանը ցանկացել է իր տեղակալ բերել եւ նշանակել ՀՀ քննչական կոմիտեի Երեւանի Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժնի նախկին պետ Հակոբ Գեւորգյանին:

Գեւորգյանը դիմում է ներկայացրել որակավորման հանձնաժողով եւ քննություն հանձնել, սակայն սեպտեմբերի 29-ին կտրվել է քննությունից: Ասել է թե՝ դատախազությունում եղել է կոնկրետ անձ, որը Աննա Վարդապետյանին հակադրվել է, իսկ թե ով է նա, մանրամասները կներկայացնենք մի փոքր ուշ: Թե ինչ կլինի հետո, կհետեւենք զարգացումներին:

Ի դեպ, գլխավոր դատախազի ցանկալի թեկնածուն՝ Երեւանի Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժնի նախկին պետ Հակոբ Գեւորգյանը, 2019-ին մարդ էր գցել մեքենայի տակ Բժշկական ինստիտուտի մոտ, սակայն այդպես էլ մութ մնաց, թե ինչ պատասխանատվություն կրեց այդ դեպքով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ԳՆԴԱԿԱՀԱՐԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝հոկտեմբերի 1-ին 42 տարեկան տղամարդը զանգահարել է իրավապահներին եւ հայտնել, որ 20 օր առաջ Կենտրոնական բաժնում իր երեխային տեսակցելու վերաբերյալ հաղորդում է ներկայացրել, սակայն որեւէ գործողություն չեն իրականացրել. եթե իր խնդիրը չկարգավորվի, ապա գնդակահարելու է Կենտրոնական բաժնի ծառայողներին, որից հետո ինքնասպանություն է գործելու: Իրավապահները փորձել են հանգստացնել քաղաքացուն՝ վստահեցնելով, որ ամեն բան անում են նրան օգնելու համար, սակայն հոկտեմբերի 2-ին տղամարդը կրկին զանգահարել է իրավապահներին եւ հայտնել, որ Պիոներ պալատի մոտ երակները կտրելով կատարել է ինքնասպանության փորձ, բուժօգնություն ստանալուց հետո նա հեռացել է:

ԿԱՋՄՎԵԼ Է ԱՄՓՈՓԱԳԻՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մասիսի նախկին քաղաքապետ Սաշա Հակոբյանին հրավիրել են Գլխավոր դատախազություն:

«Ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 16-րդ եւ 17-րդ հոդվածներով՝ ծանուցում եմ, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Սաշա Ժորայի Հակոբյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր, ինչի հիման վրա Ձեր անունով հաշվառված գույքը հանդիսանում է բռնագանձման առարկա: Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

Հոկտեմբերի 1-ին՝ժամը 23:55-ին, ոստիկանություն հաղորդում է ստացվել, որ Արմավիրի մարզի Շենավան գյուղի գազալցակայանի մոտից շտապօգնության խումբը «կրծքավանդակի կտրածծակած, թափանցող վերք ախտորոշմամբ» «Արմավիր» բժշկական կենտրոն է տեղափոխել 34-ամյա տղամարդու, որն այնուհետեւ տեղափոխվել է «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ոստիկանությունից հայտնում են, որ, ըստ բժշկի տեղեկանքի, նա ի վիճակի չէր հաղորդում տալու:

Ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ Բերքաշատ գյուղի տներից մեկում կենցաղային հարցերի շուրջ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ հիվանդանոց տեղափոխված տղամարդուն դանակահարել է 46-ամյա տանտերը: Նա հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին:

Բերքաշատ գյուղի բնակիչ 46-ամյա տղամարդը ձերբակալվել է. տեղեկացնում է ոստիկանությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը ՀՀ-ում բացահայտվել է հանցագործության 125 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՄԱՆ ԳՆԵՐ

Տավուշի մարզում ընթացքի մեջ են խաղողի մթերման աշխատանքները: Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Վաղինակ Սուքոյանից տեղեկացա, որ հոկտեմբերի 3-ի դրությամբ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի Բերդի մասնաճյուղը ընդունել է 2500 տոննա խաղող՝ կիլոգրամը 155 դրամով, «Իջեւանի գինու եւ կոնյակի գործարան» ԲԲԸ-ն՝ 155 տոննա՝ կիլոգրամը 150 դրամով, «Երեւանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի Դեբեդավանի գինու գործարանը՝ 465 տոննա՝ կիլոգրամը 120 դրամով, Կողբի «Կանաչ գյուղ» ՍՊԸ-ն՝ 100 տոննա՝ կիլոգրամը 160-200 դրամով: Խաղողի բերքի ընդունման աշխատանքները շարունակվում են: Վ. Սուքոյանը հայտնեց, որ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի Բերդի մասնաճյուղը ընդունած խաղողի դիմաց մի քանի օրվա ընթացքում խաղողագործների բանկային քարտերին փոխանցում է գումարը, իսկ մնացած գործարանները գումարները փոխանցում են խաղողագործների հետ կնքած պայմանագրերում նշված ժամկետներին համապատասխան: Նախկին տարիներին «Երեւանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի Դեբեդավանի գինու գործարանը խաղողագործներին այդ գումարները վճարել է տարեվերջին:

ՀԱՅԱԴՈՒԼԻ ՀԵՏԵՎԱՆՔ

Բերդ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ համայնքի ավագանու ընտրություններում հաղթած «Զորավոր համայնք» դաշինքի թեկնածուների ցանկի 2-րդ համար Սամվել Հովսեփյանը սեպտեմբերի 30-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ 2 ամիս ժամկետով կալանավորվել է: Նա մեղադրվում է Բերդ համայնքի Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրի մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին քարոզչության հարկադրելու մեջ: Նույն մեղադրանքով կալանավորված են նաեւ Բերդի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար, «Զորավոր համայնք» դաշինքի թեկնածուների ցանկի 36-րդ համար Հասմիկ Մելիքյանը եւ Ներքին Կարմիրաղբյուրի վարչական ղեկավար, «Զորավոր համայնք» դաշինքի թեկնածուների ցանկի 44-րդ համար Լեւոն Առաքելյանը: Սամվել Հովսեփյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը, նա հոկտեմբերի 1-ին հացադուլ է հայտարարել: Հոկտեմբերի 3-ի առավոտյան Ս. Հովսեփյանի պաշտպան, փաստաբան Գոռ Սաղոյանը «Վանաձոր» ՔԿՀ-ում հանդիպել է Ս. Հովսեփյանի հետ: Գ. Սաղոյանը հայտնեց, որ Սամվել Հովսեփյանի առողջական վիճակը բավարար է, տրամադրությունը տեղն է, նա գտնվում է բժիշկների հսկողության տակ, հացադիմուլի դիմելով՝Ս. Հովսեփյանը բողոքում է իր դեմ իրականացվող քաղաքական հետապնդման դեմ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱՄԱԿ

ԴԻՄԵԼ ԵՆ ՄԱԿ-Ի ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻՆ

Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի նախաձեռնությամբ ու համակարգմամբ, նամակով դիմել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Ֆոլքեր Թյուրքին՝ կոչ անելով հանձնակատարի գրասենյակին միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ շարունակվող ագրեսիայի կասեցման ուղղությամբ:

«Մենք պահանջում ենք փաստահավաք առաքելության տեղակայում Հայաստանի դեմ Ադրբեջանի կողմից ՀՀ սուվերեն տարածքում իրականացրած երկօրյա հարձակման ընթացքում մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները հետաքննելու նպատակով: Ի հավելումն՝ մենք պահանջում ենք նաեւ երկարաժամկետ մոնիթորինգային առաքելության տեղակայում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանին՝ որպես ուժի կիրառումը եւ մարդու իրավունքների հետագա խախտումները կանխարգելող միջոց»,- ասված է նամակում, որը ստորագրել են քաղհասարակության ավելի քան 2 տասնյակ կազմակերպություններ:

Նամակում քաղհասարակության կազմակերպությունները հիշեցրել են, որ սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական հարձակում է սկսել Հայաստանի դեմ՝ թիրախավորելով թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական օբյեկտները, կոպտորեն խախտելով ՄԱԿ-ի կանոնադարությունը եւ Ժնեւյան կոնվենցիաները:

«Կարեւոր է, որպեսզի Ադրբեջանի ագրեսիան չդիտարկվի որպես առանձին դեպք, այլ ընկալվի ավելի լայն տարածաշրջանային համատեքստում: Տարածաշրջանում նկատվում է ուժի կիրառման միջոցով որոշակի նպատակների հասնելու նոր միտում: Սովորաբար ագրեսոր երկիրն ավելի մեծ եւ ավտորիտար պետություն է, որը հարձակում է գործում ժողովրդավար հարեւանի վրա: Այս միտումը վտանգավոր նախադեպ է ստեղծում՝ սովորական դարձնելով ուժի կիրառումը եւ թուլացնելով միջազգային ինստիտուտներն ու ձեւաչափերը, այդ թվում՝ ՄԱԿ-ը, որոնք ստեղծվել են կարգավորելու եւ կանխելու հակամարտությունները: Այս միտումն ավելի լայն համատեքստում խարխլում է ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները: Այս առումով համարժեք եւ անզիջում միջազգային արձագանքը չափազանց կարեւոր է իրավիճակի վատթարացումը եւ մարդու իրավունքների միջազգային ինստիտուտների հետագա խարխլումը կանխելու համար: Պատերազմի ավարտից ի վեր մենք տարածաշրջանում ավելի մեծ միջազգային ներգրավվածության եւ ներկայության կոչ ենք արել՝ վերջ դնելու Բաքվի՝ հակամարտության «կարգավորման» թշնամական մոտեցմանը: Սա հիմա անհրաժեշտ է առավել, քան երբեւէ: Մարդու իրավունքների խախտումներն արձանագրող փաստահավաք առաքելությունը վերջին ագրեսիայի համատեքստում կլինի միջազգային ներգրավածությունը վկայող հզոր միջոց: Մենք նաեւ կոչ ենք արել քաղաքացիական դիտորդական առաքելություն իրականացնել երկու երկրների սահմանի երկայնքով, եւ դա շարունակում է արդիական հարց մնալ ապատեղեկատվական արշավների եւ Ադրբեջանի կողմից ուժի շարունակական կիրառման լույսի ներքո:

Մենք անհանգստացած ենք, որ, առանց պատշաճ միջոցների, ստեղծված իրավիճակը ոչ միայն կվատթարացնի դրությունը Հայաստանում, այլ նաեւ կազդի ամբողջ տարածաշրջանի վրա: Հայաստանի ինքնիշխանության դեմ հարձակումը պետք է վճռական հակազդեցության արժանանա՝ կանխելու մարդու իրավունքների ու միջազգային հումանիտար իրավունքի հետագա հնարավոր խախտումները»,- ասված է ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին ուղղված նամակում:

ԼՈՒՐԵՐ

ԱՌՑԱՆՑ ՏԵԽՔՆՆՈՒՄ

Առանց զրոյական տեղեկանք ներկայացնելու հնարավոր կլինի իրականացնել ավտոմեքանայի տեխզննումը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ավտոմեքենայի տեխնիկական զննություն իրականացնելու համար այլեւս անհրաժեշտ չէ ներկայացնել գույքահարկի պարտավորության բացակայության վերաբերյալ տեղեկանք՝ հաշվի առնելով, որ այդ տեղեկատվությունը առցանց հասանելի է տեխզննման կայաններում: Տեղեկացնենք, որ ներկայումս տեխզննման կայաններն առցանց հասանելիություն ունեն փոխադրամիջոցի գույքահարկի համակարգին եւ առցանց կարող են ճշտել գույքահարկի վճարումը կատարած լինելու փաստը:

Այս մասին որոշման նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի կողմից: Գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման փաստը հավաստող փաստաթուղթ չի պահանջվում նոր ներմուծված եւ ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա մեխանիկական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ:

ԿՍԱՀՄԱՆՎԻ ՀՍՏԱԿ ԾԱՎԱԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կկիրառվի: Այն ուժի մեջ կմտնի հաջորդ տարվա հունվարի 1-ից: Խոսքը խոշոր եղջերավոր կենդանիների թարմ եւ սառեցրած մսի, խոզի մսի, թռչնամսի, հնդկահավի մսի, կաթնային շիճուկի մասին է: Օրինակ խոզի մսի քվոտան սահմանվել է 7500 տոննա, ընտանի թռչունների մասով՝ 39 հազար 100 տոննա:

Այսինքն՝ 2023 թվականի ընթացքում Հայաստանի տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը կթույլատրվի սահմանված քվոտայից ոչ ավելի ծավալով՝ լիցենզիայի առկայության դեպքում, իսկ առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների ներմուծման լիցենզիա տալու մասով լիազոր մարմին ճանաչվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

Նշենք, որ ապրանքի ներմուծման թույլատրելի ծավալը բաշխվելու է հետեւյալ կերպ՝ պատմական գնորդների համար՝ ներմուծման թույլատրելի ընդհանուր ծավալի 75 տոկոսը, իսկ այլ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար՝ներմուծման թույլատրելի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 34 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 47-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Նարա Էդիկի Յարալյանս, կորցրել եմ ԵՊՀ-ի դիպլոմս՝ ТВ-1 N: 067190, որը ստացել եմ 1992թ.-ին: Գտնողներին խնդրում եմ զանգահարել տվյալ հեռախոսահամարով՝ 091 58 32 10:

ԲԱՐՁՐ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ

Երբ սեպտեմբերի 21-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց մասնակի մոբիլիզացիայի մասին, դրանից հետո ոչ միայն բարձրացան ավիատոմսերի գները, այլ նաեւ բնակարանների վարձավճարները: Այս իրավիճակը պահպանվում է մինչեւ այժմ. եւ սա այն դեպքում, երբ դեռ ապրիլի 15-ին կառավարության նիստում անգամ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը խոսեց բնակարանների բարձր վարձավճարների մասին եւ մատնանշեց իր եղբորը:

«Իմ եղբայրը վարձով էր ապրում, բայց վերջերս վարձատուն եռապատկել է վարձավճարը՝ ասելով, որ կան ավելի գրավիչ պայմաններ վարձով տալու եւ երկարաժամկետ կանխավճարով: Քանի որ իսկապես խնդիրը սուր է վարձակալության շուկայում, ուզում էի կոչ անել, որ ինչքան հնարավոր է շուտ կառավարության կողմից առաջարկվող գործիքը մտցնել շուկա, որպեսզի վարձով տների առաջարկը կարողանա զսպել բարձր գնաճը: Արդյունքում ՀՀ քաղաքացիները, որոնք երկար ժամանակ վարձում էին բնակարաններ, իրենք են փողոցում հայտնվում»,-նշել էր նա:

Ապրիլի 15-ից անցել է հինգ ամիս, եւ արտերկրից, մասնավորապես՝ ՌԴ-ից, կրկին մարդկանց մեծ հոսք է դեպի Հայաստան, եւ այս ընթացքում ակնառու են անբարեխղճության դեպքեր, երբ վարձավճարները կրկին բարձր են:

Ստացվում է՝ այսքան ամիս անց որեւէ փոփոխություն չի եղել: Այժմ անգամ անհնար է 300 հազար դրամով քիչ թե շատ նորմալ վիճակում գտնվող բնակարան գտնել վարձով բնակվելու համար, իսկ վարձակալներն էլ, օգտվելով պահանջարկից, անհարկի բարձրացնում են գինը նաեւ մինչեւ այս ապրողների, այսինքն՝ ՀՀ քաղաքացիների համար: Այս ամենը կառավարությունը շարունակում է տեսնել, սակայն ոչ մի արդյունավետ քայլ չի արվում:

ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Ի կատարումն 13.04.2022-ի դատավճռի՝ «Ժողովուրդ» օրաթերթը հայցվորից ներողություն է խնդրում: Կատարողական թերթ՝ թիվ ԵԴ/41539/02/21, ArmLur.am կայքում տեղադրվածի հղումը՝ https://armlur.am/1216119/?fbclid=IwAR0Twqkgo_KAedMgr0G0T3y4jla2ctEkIlo9NocVByAeoVfExd0vFJyzXHw :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԴԱՌՆԱ ՀՈԳԵԲԱՆԻ ՀԱՍՏԻՔԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն ընդունել է Քվեբեկի հայկական բժշկական ասոցիացիայի ծրագրի հիմնական համակարգող եւ ասոցիացիայի անդամ Ռիտա Կույումջյանի գլխավորած պատվիրակությանը:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ հանդիպման մասնակիցները քննարկել են հանրակրթության ոլորտում «Հետտրավմային աճի եւ տոկունության» ծրագրի իրականացման հնարավորությունը:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ դպրոցներում առկա են տարաբնույթ խնդիրներ՝ երեխաներին անհրաժեշտ հոգեբանական աջակցության եւ բուլինգի հետ կապված: Նա տեղեկացրել է, որ վերջերս հաստատվել է դպրոցների ֆինանսավորման նոր բանաձեւը, համաձայն որի՝ հաջորդ ուստարվանից բոլոր հաստատություններում պարտադիր կդառնա հոգեբանի հաստիքը, եւ այդ առումով առկա են բազում անելիքներ՝ որակյալ հոգեբաններ ներգրավելու, նրանց վերապատրաստելու, մասնագիտական զարգացմանը նպաստելու, ինչպես նաեւ աջակցելու առումով: Նախարարի տեղակալի խոսքով՝ 44-օրյա պատերազմի ընթացքում գործընկերների հետ համագործակցությամբ իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ երեխաներին հոգեբանական աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

«Այսօրվա բարդ իրականությունում երեխաների հոգեբանական աջակցության խնդրին պետք է ինստիտուցիոնալ մոտեցում ցուցաբերել, եւ այս առումով կարեւորում եմ ուսուցիչների հետ տարվող աշխատանքը: Մենք պետք է ծրագրի հավասար շահառուներ դիտարկենք թե՛ սովորողներին, թե՛ ուսուցիչներին. եթե ուսուցիչները չունենան այդ տոկունությունը, ապա այն երեխաներին փոխանցելը դժվար կլինի: Մեր ուսուցիչները, իհարկե, շատ ուժեղ են, եւ նրանցից շատ բան ունենք սովորելու, բայց նաեւ մեթոդական աջակցության կարիք կա, որպեսզի, որպես անձ, տարբեր իրավիճակներում ավելի պատրաստված լինեն եւ երեխաներին ճիշտ ուղղորդեն»,- նշեց Ռիտա Կույումջյանը: Ռիտա Կույումջյանի խոսքով՝ հետտրավմային աճի սկզբունքների վրա հիմնված տոկունության բարձրացման դասընթացի նպատակն է հանրության շրջանում ձեւավորել դրական մտածելակերպ, խոցելի խմբերի մոտ բարձրացնել տոկունության աստիճանը եւ դաստիարակել հոգեպես առողջ սերունդ: Նա վստահեցրել է՝ այդ ամենը հնարավորություն կտա անհատին եւ հասարակությանն ավելի լավ դիմակայել հետագա փորձություններին: Հանրակրթական ծրագրում նմանօրինակ դասընթացի հնարավոր ներառումը, ըստ Ռիտա Կույումջյանի, կարող է նպաստել յուրաքանչյուր աշակերտի տոկունության բարձրացմանը, բուլինգի նվազեցմանը, կենտրոնացման բարելավմանը եւ ուսումնական առաջադիմության բարձրացմանը: Կողմերը պայմանավորվել են մշակել հուշագրի նախագիծ, որի շրջանակում համագործակցող բոլոր կողմերի, այդ թվում՝ ԿՁՆԱԿ-ի, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի եւ դրա տարածքային կառույցների մասնակցությամբ աշխատանքներ կիրականացվեն՝ որոշ համայնքների դպրոցներում ծրագիրը փորձնական ներդնելու հնարավորության ուղղությամբ:

Գործընթացում կներգրավվեն մեր մասնագիտական ռեսուրսները? ԿՁՆԱԿ-ը՝ կրթության բովանդակության եւ ուսուցիչների պատրաստման մասով, իսկ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը՝ որպես մասնագիտացված ծառայություն մատուցող մարմին: Հընթացս կմշակվեն ծրագրի մեթոդաբանությունը եւ գործիքակազմը, ինչպես նաեւ կիստակեցվեն համապատասխան գործառույթները: Փորձնական ծրագրի արդյունքների գնահատումից հետո կքննարկվի դրա հետագա իրականացման եւ տարածման հնարավորությունը՝ առաջարկելով գործընթացում ներգրավել նաեւ Մանկավարժական համալսարանին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այն մասին, որ անհայտ անձը, ներկայանալով որպես «ՍՄԱՐԹ ԷՅՐԼԱՅՆԶ» ՍՊԸ-ի տնօրեն, օգտագործելով Ընկերության տվյալները, ներկայացել է Ընկերության տնօրեն և միաժամանակ, որպես տնօրեն, ներկայացրել է հաշվետվություններ ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ նպատակ ունենալով հափշտակել առանձնապես խոշոր չափերի՝ պետությանը պատկանող գումար: Ողջամտորեն ենթադրվում է, որ օգտագործված կլինի նաև Ընկերության տվյալներով կեղծ կնիք: Քանի որ դեռևս հայտնի չէ, թե այլ ի՞նչ ապօրինի գործարքներ են կատարվել առերևույթ հանցանք կատարած անձի կողմից, ուստի, վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ Ընկերության կնիքը համապատասխան հրամանով ճանաչվել է անվավեր և պատրաստվել է նոր կնիք:

Ընկերության վավեր կնիքն այսուհետ ունի հետևյալ տեսքը՝

«ՍՄԱՐԹ ԷՅՐԼԱՅՆԶ» ՍՊԸ-ի

Տնօրեն՝ Իլլարիոն Ղարիբյան

ՀՀ, ք. Երևան

09 սեպտեմբերի 2022թ.

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԹԱՏՐՈՆԸ՝ ԽՐԱՄԱՏ

ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐԸ՝ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԵՐԻՆ

Թատրոնը՝ խրամատ. յուրաքանչյուրն իր տեղում իր աշխատանքով ու արվեստով պետք է պայքարի հանուն առաջընթացի. այսպես են կարծում թատերական ոլորտի ներկայացուցիչները՝ վստահեցնելով, որ հատկապես ծանր, պատերազմական օրերին թատրոնները պետք է կանգ չառնեն, նոր ներկայացումներով, նոր խոսքով ու ասելիքով լցնեն մարդկանց հոգիներն ու սրտերը:

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Նարինե Գրիգորյանն առաջնորդվում են այդ սկզբունքներով՝ ադրբեջանական ագրեսիայի պայմաններում անգամ չդադարեցնելով աշխատանքը:

«Խաղացինք մանկական ներկայացումներ, քանի որ երեխաները մեղավոր չեն նրանում, ինչ տեղի է ունենում մեր դաժան աշխարհում, դաժան իրականությունում, եւ պարտավոր չեն զգալ այդ ամենի ծանրությունը: Իսկ այսօր նաեւ խաղում ենք մեծահասակների համար: Օրերս խաղացինք «Պեպո» բեմադրությունը»,-նշում է Մկրտչյանը:

Ըստ նրա՝ հասարակությունն ամենից շատ գոտեպնդվելու, ներշնչվելու, ուժ ստանալու կարիք ունի: «Մենք հաճախ ենք մեզ այս հարցը տալիս, թե իբրեւ մշակութային գործիչներ որն է մեր դերը նման իրադրություններում՝ մնա՞լ ծանր հոգեվիճակում, թե՞ փորձել հակազդել այդ ամենին: Մենք փորձում ենք հաղթահարել ցավն ու դրան հակակշռող մի բան առաջարկել, իսկ դա մեր աշխատանքն է, մեր ամենօրյա աշխատանքն է: Սա էլ մեր խրամատն է, մեր բաժին կռիվն է»,-շեշտում է մայր թատրոնի տնօրենը:

Առաջիկայում Սունդուկյանի թատրոնի փոքր բեմ կբարձրանա Ալբերտ Սաֆարյանի բեմադրությամբ «Կուկարաչա» ներկայացումը, կլինի նաեւ մանկական բեմադրություն: Պատրաստվում են մասնակցել միջազգային փառատոնի:

Համազգային թատրոնի գեղարվեստական ղեկավար Նարինե Գրիգորյանը հիշեցնում է, որ Սոս Սարգսյանը Համազգայինը հիմնադրել է պատերազմի տարիներին: Այն հոգեւոր սնունդ էր հանդիսատեսի համար:

«Մարդիկ գալիս էին թատրոն, այստեղ տաքանում էին, ներկայացում դիտում: Մենք անգամ վավերագրական կադրեր ունենք, թե ինչպես են դերասանները վառարանի մոտ նստած փորձ անում, երբեմն սոված, բայց այդ ժամանակ թատրոնն իր մեծ դերն է կատարել: Հիմա եւս պատերազմ է, եւ թատրոնը սովորել է, որ նման իրավիճակներում պետք է ավելի շատ տեր կանգնի իր ժողովրդին»,-հավաստիացնում է Գրիգորյանը:

Նրա խոսքով՝ իրենց թատրոնի ներկայացումները հոգին լույսով, ապրելու ցանկությամբ ու բարությամբ են լցնում, ինչը միշտ եղել է Սոս Սարգսյանի ուղերձը հանդիսատեսին:

Սեպտեմբերին թատրոնում չեն խաղացել միայն «Վեներան մուշտակով» ներկայացումը, մյուս բեմադրությունները պահպանվել են, իսկ դահլիճները լեփ-լեցուն են եղել:

«Միշտ եղել է հարցադրումը՝ խաղա՞լ այսօր: Ես ասում էի, որ խաղում ենք, քանի որ հիշում էի, թե ինչի համար է ստեղծվել այս թատրոնը: Հավատացեք՝ եթե նույնիսկ այդ օրն ընդամենը 70 տոմս էր վաճառված, մինչեւ ներկայացման սկիզբը բոլոր տոմսերը վաճառվում էին, ու հանդիսատեսը ներկայացումից հետո շնորհակալություն էր հայտնում, որ խաղացինք: Ասում էին, որ հոգիները լցվել են, եւ ապրելու ուժ, ավելին անելու լույս է եկել բեմից»,-ասում է գեղարվեստական ղեկավարը:

Նա խոստովանում է՝ամեն ներկայացում խաղալը հաղթանակ է դարձել, քանի որ բեմի մեքենավարները սահման են մեկնել, դերասանները կորոնավիրուսով են վարակվում, սակայն հասկանում են, որ իրենց կետում իրենց գործն են անում եւ դրանով իսկ օգնում: «Ոմանց համար դու փարոս ես, ուղենիշ ես: Մեր կյանքը չի կանգնել. ես ապրում եմ, դու ուզում ես՝ ես չապրե՞մ. ես ավելին եմ ապրելու: Ես այդպես եմ որոշել»,-ընդգծում է Նարինե Գրիգորյանը:

Օրերս Համազգային թատրոնը Գյումրու թատրոնի հետ համատեղ Գյումրիում խաղացել է Նիկոլայ Ծատուրյանի բեմադրությամբ «Հրաշագործը» ներկայացումը, որը հոկտեմբերին կխաղան նաեւ Երեւանում, բեմ են բարձրացրել ռեժիսոր Արման Նշանյանի «Մոլորված Նյու Յորքում» ներկայացումը, շուտով կլինի նաեւ Իլյա Մոշչիցկու «Երեք գույն. ծիրանագույն» ներկայացման առաջնախաղը:

«Ես չեմ ուզում զոհերի մասին պատմել, ուզում եմ՝ մեր գենի մեջ մտնի հաղթանակը կիսատ չթողնելու գաղափարը: Մինչեւ վերջ պետք է տանել բռնած գործը, չկոտրվել կեսից, համբերություն ունենալ, դիմացկուն լինել, սիրել, չկորցնել նպատակը, ինչը մեզ հիմա շատ պետք է, որովհետեւ մինչեւ վերջ համբերողն է հաղթում: Պատերազմի ժամանակ թեւաթափ ես լինում ու չգիտես՝ գուցե քո թշնամին ավելի վատ վիճակում է, ուստի համբերությունն ամենամեծ զենքն է»,- շեշտում է Նարինեն եւ հավելում, որ այս օրերին մենք ծարավ ենք կյանքի, հանդիսատեսը էլ ավելի ուժեղ է զգում, ավելի ուժեղ է արձագանքում, ավելի շատ սիրում իրենց, իրենք էլ՝նրանց:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ

«ԶՈՒԼԱԼԻ» ՖԻԼՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

Ռեժիսոր Հայկ Օդյանի «Զուլալի» ֆիլմը Սանկտ Պետերբուրգում մրցանակի է արժանացել. մրցանակը ստացել է դերասանուհի Մարինե Պետրոսյանը՝ արժանանալով լավագույն դերասանուհու կոչմանը: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացավ ֆիլմի ֆեյսբուքյան պաշտոնական էջից:

«Մարինե Պետրոսյանը՝ լավագույն դերասանուհի. «Զուլալիի» հաղթարշավը շարունակվում է: «Զուլալի» ֆիլմում Աքիրի դերը լավագույնս ներկայացնելու համար Մարինե Պետրոսյանը ք. Գատչինայի (Ս.Պետերբուրգ) «Գրականություն եւ կինո» («Литература и кино») XVIII միջազգային կինոփառատոնում ստացել է լավագույն դերասանուհի մրցանակը»,- գրված է հրապարակմանը կից:

Ավելի վաղ հայտնել էինք, որ մրցանակի էր արժանացել ֆիլմում Զուլալիին մարմնավորող Հերմինե Ստեփանյանը՝ Սալենտոյի միջազգային կինոփառատոնում Զուլալիի դերակատարման համար ստանալով լավագույն դերասանուհի մրցանակը:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի հետ զրույցում դերասանուհին հայտնել էր՝ ֆիլմի երաժշտությունը գրել է հայ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, եւ հենց «Զուլալիի» առանձնահատկություններից է այն, որ Տիգրան Մանսուրյանը ավելի քան 30 տարվա դադարից հետո կինոերաժշտություն է գրել հենց այս ֆիլմի համար:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 1-ին տեղի է ունեցել Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի ներկայացումը: Նկատենք՝ Հայկ Մարությանը, երկրի իրավիճակով պայմանավորված, հետաձգել էր սեպտեմբեր ամսվա ներկայացումները: ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել ներկայացումից:

Ուշագրավ է, որ ներկայացման ամենասկզբում դահլիճում տեղադրված է եղել Հայկ Մարությանի լուսանկարը, վերջինս մոտեցել է, նայել լուսանկարին եւ ասել՝ անասուն: Նրա այս հայտարարությունից հետո դահլիճում ծափողջույններ են եղել:

Նրա խոստացված «voice»-ները Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ հրապարակվել են, սակայն տեքստային ֆորմատով. դրանք հիմնականում նվիրված են եղել ԱԺ ներկայիս նախագահ Ալեն Սիմոնյանին: Առհասարակ իր ամբողջ ներկայացման ընթացքում նա ամենից շատ անդրադարձել է հենց Սիմոնյանին, նաեւ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին եւ ներկայիս քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին: Ընդ որում՝ բոլորի վերաբերյալ նա օգտագործել է վիրավորական արտահայտություններ:

Կարելի է արձանագրել՝ ըստ էության, Մարությանը տվեց քարոզարշավի մեկնարկը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Forbes–Ի 1–ԻՆ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՈՒՄ

Tesla-ի հիմնադիր եւ գործադիր տնօրեն Իլոն Մասկը Forbes ամսագրի վարկածով բարձրացել է 400 ամենահարուստ ամերիկացիների ցուցակի առաջին հորիզոնական:

Մասկի կարողությունը մեկ տարում ավելացել է ավելի քան 60 միլիարդ դոլարով՝ հասնելով 251 միլիարդ դոլարի:

Երկրորդ տեղը զբաղեցրել է ցուցակի անցյալ տարվա առաջատարը՝ Amazon.com-ի ղեկավար Ջեֆ Բեզոսը՝ 151 միլիարդ դոլարով: Լավագույն եռյակը եզրափակել է Բիլ Գեյթսը՝ 106 միլիարդ դոլար կարողությամբ, չորրորդ տեղում Oracle-ի գործադիր տնօրեն Լարի Էլիսոնն է (101 միլիարդ դոլար), հինգերորդը՝ ներդրող Ուորեն Բաֆեթը (97 միլիարդ դոլար):

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԱՎԱՐՏՎԻ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը» հետաքրքրված է պորտուգալական «Պորտուի» դարպասապահ Դիոգու Մեյրելեշ Կոշտայի ծառայություններով:

2023թ. հունիսին կավարտվի 31-ամյա իսպանացի Դավիդ Դե Խեայի պայմանագիրը «Մանչեսթեր Յունայթեդի» հետ: Պորտուգալիայի հավաքականի 23-ամյա դարպասապահը համարվում է հավասարազոր փոխարինող Դե Խեային:

Կոշտան ծնվել է Շվեյցարիայում, սակայն ընտրել է Պորտուգալիայի հավաքականը: Նա «Պորտուի» սան է:

Նրա պայմանագիրը «Պորտուի» հետ նախատեսված է մինչեւ 2026թ. հունիս:

● *Հոկտեմբերի 5-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Cabaret Restart» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈՁԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հայաստանի Հանրապետություն ապրանքներ ներմուծողը ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու նպատակով ի՞նչ փաստաթղթեր է ներկայացնում մաքսային մարմին:

Գրիգոր Վարդանյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար դրոշմանիշեր ձեռք բերելու համար ներմուծողը վերադաս մաքսային մարմին է ներկայացնում՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձեւի դիմում՝ ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար,

բ) օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված պայմանագրի պատճենը, որի հիման վրա կատարվելու է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ձեռքբերումը եւ ներմուծումը,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձեւի հաշվետվություն՝ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախկինում տրամադրված դրոշմանիշերի օգտագործման մասին:

Օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված՝ նախկինում մաքսային մարմին ներկայացված պայմանագրի շրջանակներում ներմուծումներ իրականացվելու դեպքերում պայմանագրի փոխարեն մաքսային մարմին կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետություն ներմուծվելիք ապրանքների տեսականու եւ քանակությունների, տարայի տարողության, իսկ սպիրտային խմիչքների դեպքում՝ նաեւ սպիրտայնության վերաբերյալ տվյալներ պարունակող այլ փաստաթուղթ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ներմուծված խմիչքները ենթակա են պարտադիր դրոշմավորման, թե ոչ, պետք է ղեկավարվել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով եւ ՀՀ կառավարության 26.10.1999թ. «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N662 որոշմամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր օբյեկտներն են ենթակա լիցենզավորման:

Մարինե Դանիելյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լիցենզավորման ենթակա օբյեկտներն են բնակավայրերում կառուցվող 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող, մինչեւ երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տները, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտները, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունները եւ 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակները, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցները, 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունները եւ 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունները: Վերոնշյալ օբյեկտների շինարարական աշխատանքները պետք է կատարվեն տնտեսական եղանակով, առանց լիցենզավորված կապալառուի եւ շինարարության որակի տեխնիկական հսկիչի ներգրավման:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ լիցենզավորման մասին օրենքով սահմանվել եւ լիցենզավորման ենթակա տեսակների ցանկից հանվել են մի շարք օբյեկտների նկատմամբ լիցենզավորված կազմակերպությունների կողմից շինարարություննն իրականացնելու պահանջը, որոնց նկատմամբ կիրառվում է հսկողություն՝ համարելով դրանք չլիցենզավորված գործունեություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արված է Արթիկում

Քաղաքացին իր ընկերոջը բջջային հեռախոս փոխանցելու նպատակով Արթիկի գաղութի արգելված գոտու կողմից գաղութի տարածք է մոտեցնում հեռակառավարվող անօդաչու թռչող սարք (դրոն), որին ամրացված է եղել հեռախոսը, սակայն նրան չի հաջողվել նպատակը իրականացնել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.10.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: